

տուով ի հրաժեշտի¹ կացուցանելն երթալ խաղաղութեամբ յաշխարհն Յայոց:

7 Եւ եկեալ տերն Մամիկոնենից եւ սպարապետն Յայոց Վահան հրաժարել² ի թագաւորէն Արեաց Վաղարշու եւ յամենայն դրանն աւագանւոյն՝ հարցանէր թագաւորն Վաղարշ զնա եւ ասէր. «Վահան սպարապետ Յայոց, գո՞հ ես զմէնջ, ³քա՞ջ կալաք, թէ պիտի եւ այլ եւս ինչ. ասա՛»։ 8 Եւ զաւրավարին Յայոց տեառն Մամիկոնենից Վահանայ պատասխանի տուեալ՝ ասէր ցթագաւորն Վաղարշ. «Չոր ինչ ձեր բարերարութիւնդ առ մեզ արար՝ բայց Աստուածն, որ ամենեցուն արարիչն է եւ զամենայն մարդոյ կամի զբարի եւ զաւգուտ, նմա միայն հնար եւ վայելուչ էր առնել զայդ առ մարդ, զոր եւ դուք առ մեզ անարժան ծառայիցս արարեք. այլ մարդոյ մահկանացուի անհնար էր։ 9 Զանգի զվսասն թողէք, գահ եւ պատիւ տուեալ մեծարեցէք, մեռելութեան յարուցիչ եղայք⁴, զգլորեալ եւ զկորուսեալ աշխարհի մի գտեալ կանգնեցէք։ 10 Բայց որովհետեւ հարցէք եւ համարձակեցուցէք զարդարն ասել՝ որպէս եղէք աստուածաբար կենդանացուցիչ մեռելութեանս իմոյ, եւ յարուցեալ ի միջի արարեք⁵՝ կամէի, թէ զքովանդակ անձնս յարուցեալ էր, եւ ոչ զկէսս. վասն զի զկէսս մեռեալ տեսանեմ դեռ»։ 11 Եւ թագաւորին Վաղարշու հարցեալ ասէր. «Աղէ, յայտնապէս ծանո՞⁶ մեզ զպետս բանիդ, զի գիտասցուք»։ 12 Եւ սպարապետին Յայոց տեառն Վահանայ Մամիկոնէից ասացեալ⁷. «Չի թէ էր եւ հնար էր շնորհել ձեզ զտանուտերութիւնն Կամսարականին՝ ապա բովանդակապէս շնորհեալ ի ձեռն՝ տեսանէի զմեռելութիւն ամենայն անդամոցս կենդանացեալ։

13 Եւ թագաւորին Վաղարշու պատասխանի արարեալ սպարապետին Յայոց տեառն Մամիկոնենից Վահանայ⁸՝ ասէր. «Յաղագս ոչ կարի տրտմեցուցանելոյ զքեզ ի ժամուս, եւ դարձեալ՝ վասն զի նախ եւ առաջին զայդ պարգէւ ինդրեցեր ի մէնջ՝ եղիցի վասն քո տուեալ զտերութիւն Կամսարականին։ 14 Իսկ յաղագս տերութեանն Արծրունւոյն թո՞ղ վայր մի, զի գիտասցեն մարդիկն [թէ] որ ի տոհմէն են, սպաս ինչ արժանաւորապէս ցուցանել առ մեզ եւ վաստակս ինչ յաւգուտ Արեաց աշխարհիս վաստակել. հայեցուք ապա եւ մեք յարժանն։ 15 Բայց դու այժմու ի մէնջ պարգեւիդ գոհ լեր,

1 ՁԱտ. ի հրաժեշտ

2 ՁՏՏ. հրաժարեալ. *այսպէս ըստ Ն. Բ.*

3 Ձ. քաջ կալոք... ասայ. եւ զօրավարն

4 Ձ. եղաք

5 ՁՏՏ. եւ յարուցեալ իմ ի միջի արարեք. *այսպէս ըստ Ն. Բ.*

6 Ձ. ծանոյ

7 Ձ. մամիկոնենից

8 ՏՏ. *չիք* Վահանայ